1. C. Smith, Marks' Basic Medical Biochemistry, a Clinical Approach, Philadelphia, 2012
2. D. Nelson, M. Lehninger, Principles of Biochemistry, Atlanta, 2009
3. H. Lodish, A. Berk, S. Zipursky, P. Matsudaira, D. Baltimore, J. Darnell., Molecular Cell Biology, New York, 2000
4. J. Berg, J. Tymoczko, L. Stryer, Biochemistry, New York, 2002
5. А. Цыганенко, В. Жуков, В. Мясоедов, И. Завгородний, Клиническая биохимия, М., 2002
6. Биохимические основы патологических процессов, ред. Е. Северина, Москва, 2000
7. Р. Марри, Д. Греннер, П. Мейес, В. Родуэлли, Биохимия человека, Москва, 1993
8. Т. Березов, Б. Коровкин, Биологическая Химия, Москва, 2008
9. Գ. Խաչատրյան, Մ. Աղաջանյան, Կենսաքիմիա, Երևան, 2001
10. <http://www.booksmed.com>
11. <http://pubmed.gov>
12. <http://www3.interscience.wiley.com/cgi-bin/>
13. <http://www.freebooks4doctors.com>
14. <http://www.namrata.co/>

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տարային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.թ., Դոցենտ Ռազմիկ Մխիթարյան
ՀԵՌԱԽՈՍ	

ԱՄԲԻՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.թ., Դոցենտ Ռազմիկ Մխիթարյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթաբանական ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգաբլթ
I	I	2	17	2	60	34	14	20	17	3	6	
	II	2	17	2	60	34	14	20	17	9		
Ընդամենը		4	34	4	120	68	28	40	34	12	6	

1. ՆԱԽԱՂԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝

- Գիտելիքներ դպրոցական «Ինֆորմատիկա» և «Մաթեմատիկա» առարկաներից
- Ծանոթություն ինֆորմատիկայի հիմնական գաղափարներին և տերմիններին

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Մաթեմատիկական» բնագիտական առարկա է, առանց որի անհնար է ուսումնասիրել մյուս գիտությունները: Մաթեմատիկայի գաղափարները, դատողություններն ու օրինաչափությունները ծառայում են որպես լեզու. նրանով գրում, խոսում և մտածում են մյուս գիտությունները: Այն բացատրում է դժվարին երևույթների օրինաչափությունները, ուսումնասիրում և մեծ ճշգրտությամբ նկարագրում է երևույթների ընթացքը:

Իսկ առանց «Բժշկական ինֆորմատիկայի» այժմ անհնար է մասնագիտական գործունեություն ծավալել: Այն օգնում է ձևավորել համակարգչային գիտելիքներ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և տիրապետման, ինֆորմացիայի ստացման և մշակման համար, այդ թվում նաև առողջապահության ոլորտում:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՂԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ հիմնական մաթեմատիկական գիտելիքներ, ձևավորել հմտություններ, որոնք անհրաժեշտ են այլ առարկաների ուսումնասիրման և յուրացման, մասնագիտական գործունեության ընթացքում հանդիպող կիրառական խնդիրների լուծման համար, ուսանողներին ներկայացնել իրական թվերի բազմության, մի փոփոխականի ֆունկցիայի սահմանի, անընդհատության, ածանցյալի, դիֆերենցիալի, դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների վերաբերյալ տեսությունները և գործնական կիրառությունները, սովորողների մոտ ձևավորել գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ բժշկության և առողջապահության ոլորտում ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների կիրառման և տիրապետման համար:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա թվերի բազմությունների, ֆունկցիայի անընդհատության, ածանցյալի, սահմանի հաշվման մեթոդները, ֆունկցիայի դիֆերենցիալի և դիֆերենցելի լինելու հասկացությունը, ֆունկցիայի բարձր կարգի ածանցյալների և դիֆերենցիալների հաշվման մեթոդները, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինֆորմացիայի քանակի, MS office կիրառական ծրագրային փաթեթի, համացանցի և նրա հնարավորությունների մասին, online բժշկական բառարաններ, հանրագիտարաններ, բժշկական հավելվածներ, վիճակագրական հարցումներ իրականացնող գործիքները:

Կարողանա գործողություններ կատարել իրական թվերի հետ, հաշվել ֆունկցիաների սահմանները, ապացուցել ֆունկցիաների անընդհատությունը, գտնել նրանց խզման կետերը, հաշվել տարրական ֆունկցիաների առաջին և բարձր կարգի ածանցյալները, տեսական գիտելիքները կիրառել բժշկության մեջ՝ գործնական խնդիրներ լուծելու համար, օգտագործել MS office ծրագրի հնարավորությունները բժշկական փաստաթղթեր ստեղծելու, ձևավորելու և լրացնելու համար, օգտվել online բժշկական բառարաններից և հանրագիտարաններից փնտրել, գտնել բժշկական հավելվածներ և կիրառել:

Տիրապետի սահմանների տեսության, ֆունկցիաների անընդհատության, ածանցման ու դիֆերենցման հասկացություններին, թեորեմներին, փաստերին, մեթոդներին, տերմինաբանությանը, ինքնուրույն վերլուծական աշխատանքների կատարմանը, MS office ծրագրերին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Ղազարյան, Ա. Հովհաննիսյան, Տ. Հարությունյան, Գ. Կարապետյան, Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Երևան, 2002:
2. Գ. Ֆիխտենգոլց, Մաթեմատիկական անալիզի հիմունքներ, Հատոր 1, Երևան, 1970
3. Ս. Հարությունյան, Բարձրագույն մաթեմատիկա, Երևան, 2000
4. C. Neuhauser, Calculus for Biology and Medicine, London, 2011
5. Ա. Մանուկյան, Ա. Սարգսյան, «Ինֆորմատիկա», Գյումրի, 2010
6. Ա. Գալստյան, Office 2010, Երևան, 2010
7. Ֆ. Բրեդլի, Ինտեքնետ, օգտագործողի ձեռնարկ, Երևան, 2002

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՔԻՄԻԱ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	Կ.գ.թ. Կարինե Իսրայելյան
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.գ.թ., Դոցենտ Ռազմիկ Մխիթարյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթափոխ ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	25	26	25	8	6	
	II	3	17	3	90	51	26	25	25	8	6	
Ընդամենը		6	34	6	180	102	51	51	50	16	12	

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝

Դասընթացի յուրացման համար ուսանողը պետք է իմանա՝ տարրերի դիրքը պարբերական համակարգում, կապերի տեսակները և բնույթը քիմիական միացություններում: Պետք է իմանա նաև անօրգանական քիմիայի հիմնական դրույթները և բաժինները, որոնք անհրաժեշտ են հետագա բաժինները առավել խորությամբ ուսումնասիրելու համար:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ընդհանուր և կենսաօրգանական քիմիա» դասընթացը ներառում է տեղեկատվություն կարևորագույն անօրգանական և օրգանական միացությունների քիմիական և ֆիզիկական հատկությունների մասին, քիմիական կառուցվածքի տեսության հիմնական տարրերը, քիմիական թերմոդինամիկայի և կինետիկայի հասկացությունները, լուծույթների մասին տեսությունները, օրգանական սինթեզի և անօրգանական սինթեզի օրինաչափությունները, նյութերի ֆիզիկաքիմիական վերլուծության հիմունքները, օրգանական միացությունների կենսաբանական կարևոր դասերի և կենսա-պոլիմերների քիմիական հատկությունների վերաբերյալ գիտելիքներ:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ ընդհանուր քիմիա առարկայից, ուսումնասիրել անօրգանական և օրգանական միացությունների տարածման առանձնահատկությունները, դրանց կառուցվածքը, քիմիական հատկությունները, ինչպես նաև տալ օրգանական միացությունների կենսաբանական կարևոր դասերի և կենսապոլիմերների քիմիական հատկությունների վերաբերյալ գիտելիքներ:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա ընդհանուր և կենսաօրգանական քիմիայի հիմնական դրույթները, մոլեկուլի թթվահիմնայնությունը պայմանավորող հիմնական ֆունկցիոնալ խմբերը, դասակարգի փոխարինելի և ոչ փոխարինելի ամինաթթուները, մոտոսախարիդների կենսաբանական նշանակությունը և քիմիական հատկությունը, ալկալոիդների տարածվածությունը, նրանց դերը և նշանակությունը մարդու կյանքում, հետերոցիկլիկ միացությունների կենսաբանական նշանակությունը, ինդուկցիոն և մեզոմեր էֆեկտների ազդեցությունը

մուլեկուլի թթվահիմնայնության վրա, լիպիդների կառուցվածքը, պետք է դասակարգի հիդրոֆոբ և հիդրոֆիլ լիպիդները, ԴՆԹ-ի մուլեկուլի կառույցում պուրինային և պիրիմիդինային խմբերի հատկությունները:

Կարողանա օգտվել գիտական, մեթոդական գրականությունից, մասնագիտական գործունեության զարգացման համար տարբեր սոց. կայքերից, օգտվել քիմիական, ֆիզիկական և կենսաբանական սարքավորումներից, իրականացնել գործնական աշխատանքի արդյունքների վերլուծությունը, իրականացնել նաև անալիզի տվյալների տարրական վիճակագրական վերլուծություն, կանխատեսել կենսաբանորեն կարևոր միացությունների ֆիզիկաքիմիական պրոցեսների և քիմիական փոխարկումների ընթացքը և արդյունքները, կատարել թերմոքիմիական հաշվարկներ, որն անհրաժեշտ է ռացիոնալ սնման էներգետիկ ցանկը հաշվարկելու համար, օգտվել IUPAC անվանակարգումից, որը կիրառվում է կենսաբանորեն կարևոր միացություններում և դեղաբանական նյութերում ֆորմուլաներ կարդալու համար:

Տիրապետի առարկայի կիրառման համար անհրաժեշտ է գիտելիքներին, կարողություններին և հմտություններին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Chemistry: foundations and applications, ed. J. Lagowski, New York, 2004
2. H. Wennemers, Highlights in Bioorganic Chemistry, Weinheim, 2004
3. Hawley's condensed chemical dictionary. Re. R. Lewis, Hoboken, 2007.
4. Lange's handbook of chemistry. 11th ed., New York, 1973
5. T. Lindhorst, Essentials of Carbohydrate Chemistry and Biochemistry, Weinheim, 2007
6. В. Белобородов, С. Зурабян, А. Лузин, Н. Тюкавкина, Органическая химия, Москва, 2003
7. В. Попков, Общая химия, Москва, 2007-2009
8. Г. Дюга, К.Пенни, Биоорганическая химия, Москва, 1983
9. Н. Тюкавкина, Руководство к лабораторным занятиям по органической химии, М. 2002
10. О. Реутов, А. Курин, К. Бутин, Органическая химия, Москва, 2003
11. Органическая химия: учебник, ред. Н. Тюкавкина, Москва, 2008

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ, Գ/Պ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	II, III	ԿԻՍԱՄՅԱԿ	IV, V
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	Զաքարյան Հասմիկ
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննութ. ժամ	Ստուգարք
II	IV	2.5	17	3	75	51	20	31	18	6		
III	V	4	17	4	120	68	22	46	34	12	6	
ԸՆԴԱՄԵՆՆԵՐ		6.5	34	7	195	119	42	77	52	18	6	

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
Կենսաբանություն, Կենսաքիմիա, Մարդու անատոմիա, Տոպոգրաֆիկ անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն, Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն, Նորմալ ֆիզիոլոգիա, Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունաբանություն
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
Դասընթացն ուսումնասիրում է ախտաբանական անատոմիայի ընդհանուր բաժինը /ընդհանուր ախտաբանություն/ բջջի ախտաբանությունը, ընդհանուր ախտաբանական պրոցեսները, որոնք բնորոշ են բոլոր հիվանդություններին (քննարկվում են նաև այլան համակարգի հիվանդությունները) և ախտաբանական անատոմիայի մասնավոր բաժինը /մասնավոր ախտաբանություն/ առանձին հիվանդությունների էթիոլոգիան, պաթոգենեզը և ձևաբանությունը /նոզոլոգիական ախտաբանական անատոմիա/: Ուսանողներն առավել մանրակրկիտ ուսումնասիրում են օրոֆարինգեալ ախտաբանությունները՝ որպես ապագա մասնագիտության յուրացման համար անհրաժեշտ կարևոր գործոն:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**
«Ախտաբանական անատոմիա» դասընթացի ուսումնասիրության նպատակն է հիվանդությունների և ախտաբանական պրոցեսների կառուցվածքային հիմքի, դրանց պատճառագիտության ու ձևաձագման, ձևաբանական դրսևորումների, բարդությունների, էլքի և մահվան պատճառների ուսումնասիրությունը և ստացած գիտելիքների հետագա կիրառումը կլինիկական ամբիոններում և ստոմատոլոգի պրակտիկ աշխատանքում:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**
Իմանա ախտաբանական անատոմիայի դասընթացում օգտագործվող տերմինները, ախտաբանական անատոմիայում կիրառվող հետազոտության հիմնական մեթոդները, հիվանդության էթիոլոգիա, պաթոգենեզ, մորֆոգենեզ, պաթոմորֆոզ հասկացությունները,

հիվանդությունների դասակարգման սկզբունքները, ընդհանուր ախտաբանական պրոցեսների էությունն ու հիմնական օրինաչափությունները, հաճախ հանդիպող հիվանդությունների ժամանակ ներքին օրգանների բնորոշ փոփոխությունները, կլինիկա-անատոմիական վերլուծության հիմունքները, ախտաբանա-անատոմիական կառուցվածքի ախտորոշման սկզբունքները, օրոֆարինգեալ ախտաբանությանը բնորոշ փոփոխությունները:

Կարողանա հիմնավորել պաթոլոգիական պրոցեսի և նրա կլինիկական դրսևորումների բնույթը, իրականացնել հիվանդությունների ձևաբանական և կլինիկական արտահայտությունների համադրում նրանց զարգացման տարբեր փուլերում, որոշել հիվանդությունների պատճառները, պաթոգենեզը, մորֆոգենեզը, դրանց դրսևորումները, բարդություններն ու ելքերը, ինչպես նաև պաթոմորֆոզը, իսկ մահվան ելքի դեպքում՝ մահվան պատճառը և մեխանիզմները (տանատոգենեզ), անցկացնել կլինիկա-անատոմիական վերլուծություն, ձևակերպել ախտաբանա -անատոմիական ախտորոշումը, կիրառել հիվանդությունների և պաթոլոգիական պրոցեսների ժամանակ կառուցվածքային փոփոխությունների մասին ստացված գիտելիքները գործընկերների և հիվանդների հետ մասնագիտական շփման ընթացքում, կատարել կլինիկա-անատոմիական վերլուծություն և կարողանալ ախտորոշել բերանի խոռոչի և ըմպանի գոյացությունների ամենահաճախ հանդիպող ախտաբանությունները:

Տիրապետի ախտաբանա- անատոմիական միկրո- և մակրոպատրաստուկների հետ աշխատելու հմտություններին, բնորոշ ախտաբանական պրոցեսների բացահայտմանը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «*Պաթոլոգիական անատոմիա*», հեղինակ-խմբագիր՝ պրոֆ. **Ն.Դ. Վարդապարյան**, Երևան, 2006:
2. «*Патологическая анатомия*». Под ред. **А.И. Струкова, В.В. Серова**. Учебник. Переиздание. – М.: ОАО Издательство «Медицина», 2015.
3. **Vinay Kumar, Abul K. Abbas, Jon C. Aster. Robbins Basic Pathology**, 9-th edition, 910, Copyright © Saunders 2013, an imprint of Elsevier Inc. Printed in Canada.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՌՏԱԲԱՆԱԿԱՆ ՖԻԶՈՒԼՈԳԻԱ, Գ/Պ ԱՌՏԱԲԱՆԱԿԱՆ ՖԻԶՈՒԼՈԳԻԱ		
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	III	ԿԻՍԱՄՅԱԿ	V, VI
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.թ. Նարեկ Մկրտչյան
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննութ. ժամ	Ստուգարք
III	V	3	17	3	90	51	20	31	27	12		
	VI	4	17	4	120	68	22	46	34	12	6	
Ընդամենը		7	34	7	210	119	42	77	61	24	6	

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
Կենսաբանություն, Կենսաքիմիա, Մարդու անատոմիա, Տոպոգրաֆիկ անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն, Հյուսվածաբանություն, Մանրէաբանություն, Նորմալ ֆիզիոլոգիա
- 2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
«Ախտաբանական ֆիզիոլոգիա» դասընթացն ուսումնասիրում է ախտաբանական ֆիզիոլոգիայի ընդհանուր բաժինը՝ հիվանդությունների առաջացման պատճառները, զարգացման ընթացքը, ախտածին գործոնների ազդեցության մեխանիզմները, տարածման ուղիները, արյան, սիրտ-անոթային համակարգերի գործունեության խանգարման ախտաֆիզիոլոգիական առանձնահատկությունները և ախտաբանական ֆիզիոլոգիայի հետևյալ մասնավոր բաժինները՝ շնչառական, աղեստամոքսային, միզասեռական, էնդոկրին և նյարդային համակարգերի գործունեության խանգարման ախտաֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ուսանողները առավել մանրամասն ուսումնասիրում են օրոֆարինգեալ ախտաբանությունների ախտաֆիզիոլոգիական գործոնները, քանի որ դրանք անմիջապես առնչվում են նրանց ապագա մասնագիտության հետ:
- 3. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ**
Դասընթացի նպատակն է՝ ուսուցանել հիվանդության զարգացման և մարդու առողջության հիմնական օրինաչափությունները և մեխանիզմները, ինչպես նաև տալ գիտելիքներ հիվանդությունների էթիոլոգիայի, ախտածնության, կլինիկական դրսևորումների թերապիայի սկզբունքների և հիվանդությունների կանխարգելման մասին:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա ընդհանուր նոգոլոգիայի հիմնական հասկացությունները, պատճառների, պայմանների և օրգանիզմի ռեակտիվ հատկությունների դերը և նշանակությունը հիվանդությունների առաջացման, զարգացման և էլքի հարցերում, տիպիկ պաթոլոգիական պրոցեսների և ռեակցիաների զարգացման պատճառները և հիմնական մեխանիզմները, նրանց դրսևորումները, նշանակությունը տարբեր հիվանդությունների առաջացման դեպքում և էլքը, տարբեր օրգանների և համակարգերի տիպային խանգարումների պատճառները, մեխանիզմները և կարևոր դրսևորումները, փորձարարական մեթոդի դերը պաթոլոգիական պրոցեսների ուսումնասիրման մեջ, փորձի հնարավորությունները, սահմանափակումները և հեռանկարները, պաթոֆիզիոլոգիայի դերը կլինիկական բժշկության մեջ, կապը բժշկական գիտությունների հետ, ստոմատոլոգիական պրակտիկայում առավել հաճախ հանդիպող բերանի և ըմպանի խոռոչների ախտաբանությունների առանձնահատկությունները:

Կարողանա անցկացնել փորձարարական հետազոտություններ, արձանագրել և վերլուծել ստացված տվյալները, կատարել հեմոգրամների, էլեկտրոկարդիոգրամների, ընդհանուր լաբորատոր և բիոքիմիական անալիզների տվյալների վերլուծություններ, լուծել իրավիճակային խնդիրներ, բուժական պրոֆիլակտիկ գործունեության մեջ կիրառել ստացված գիտելիքները, ճիշտ գնահատել բժշկության ժամանակակից տեսական կոնցեպցիաները և ուղղությունները:

Տիրապետի կենդանիների վրա փորձերի անցկացմանը համապատասխան կանոններով՝ մոդելավորելով համապատասխան ախտաֆիզիոլոգիական իրավիճակներ տարբեր օրգան-համակարգերի համար:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. А. Адо, Патологическая физиология, Москва, 2002
2. П. Литвицкий, Патофизиология, Москва, 2002
3. ROBBINS AND COTRAN PATHOLOGIC BASIS OF DISEASE, ninth edition, ISBN: 978-1-4557-2613-4 © 2015 by Elsevier, Inc.
4. ROBBINS BASIC PATHOLOGY, ninth edition, ISBN: 978-0-323-35317-5 © 2013 by Elsevier Inc.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅՈՒՆ /ՌԵՅՏԻՆԳՄՅՈՒՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	III	ԿԻՍԱՄՅԱԿ	V, VI
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	բ.գ.թ., Դոցենտ Թամարա Ասատրյան
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգաթիվ
III	V	2.5	17	3	75	51	16	35	18	6		
	VI	3	17	3	90	51	16	35	21	12	6	
Ընդամենը		5.5	34	6	165	102	32	70	39	18	6	

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
Մարդու անատոմիա, Լատիներեն, Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունաբանություն, Նորմալ ֆիզիոլոգիա, Կենսաքիմիա
- 2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
«Դեղաբանություն» դասընթացը ապահովում է դեղաբանական միջոցների հիմնական խմբի կլինիկական դեղաբանական բնութագրի իմացություն և անհետաձգելի իրավիճակների ու հիմնական ախտաբանական համախտանիշների դեպքում որոշակի դեղաբանական միջոցների ուսուցումը ընտրության վերաբերյալ գիտելիքներ հաշվի առնելով հակադրապինգային օրենսդրությունը:
- 3. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ**
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տարատեսակ, այդ թվում նաև ատամնաբուժական հիվանդություններ բուժելիս դեղաբանական միջոցների ազդեցությունը վերլուծելու կարողություն և պատրաստակամություն:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԸՆԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**
Իմանա դեղաբանական միջոցների դասակարգումն ու հիմնական բնութագիրը, ֆարմակոդինամիկան և ֆարմակոկինետիկան, կիրառման ցուցումները, հակացուցումներն ու կողմնակի ազդեցությունները, դեղաբանական միջոցների դեղատոմսերի ձևավորման և դեղատոմսային նշանակման կազմման ընդհանուր սկզբունքները, կենսաբանական և բժշկական համակարգերում տեղեկատվության հավաքման, պահպանման, որոնման, վերամշակման, վերափոխման, տարածման տեսական հիմունքները, տեղեկատվական համակարգչային համակարգերի կիրառումը բժշկության և առողջապահության մեջ:
Կարողանա վերլուծել ընդհանուր ախտաբանության հարցերն ու բժշկական ժամանակակից տեսական հայեցակարգերն ու ուղղությունները, մասնագիտական գործունեության ծավալման նպատակով ուսումնական, գիտական գրականությունից, համացանցից օգտվել, վերլուծել դեղաբանական միջոցների ազդեցությունը և թերապևտիկ բուժման համար նրանց կիրառման հնարավորությունները ելնելով նրանց դեղաբանական հատկություններից, դուրս գրել դեղատոմսեր, կիրառել դեղաբանական միջոցների տարբեր դեղաբանական ձևեր որոշակի

ախտաբանական վիճակների դեպքում, ելնելով նրանց ֆարմակոդինամիկ և ֆարմակոկինետիկ առանձնահատկություններից, գնահատել դեղաբանական միջոցների գերդոզավորման դեպքում հնարավոր անցանկալի երևույթները և նրանց վերացման ուղիները: հիմնավորել առավել տարածված հիվանդությունների ախտաբանական թերապիայի սկզբունքները:

Տիրապետի տարբեր հիվանդությունների և ախտաբանական վիճակների բուժման, վերականգնման և կանխարգելման համար դեղաբանական միջոցների կիրառման ունակություններին, առաջին բուժօգնության, անհապաղ ու կյանքին վտանգ սպառնացող իմունային խանգարումներով ուղեկցվող իրավիճակների ժամանակ ցուցաբերվող ախտորոշիչ և բուժիչ միջոցառումների հիմունքներին, բերանի խոռոչի ներֆիլտրացիոն և հաղորդչական անզգայացման եղանակներին թերապևտիկ, վիրաբուժական, օրթոպեդիկ և օրթոդոնտիկ միջամտություններ կատարելիս, ինչպես նաև հասուն մարդկանց և երեխաների անզգայացման հնարավոր բարդությունների կանխման եղանակներին, ատամնաբուժական հիվանդություններ ունեցող հիվանդների համակարգային բուժման և վերականգնման եղանակներին՝ հաշվի առնելով օրգանիզմի ընդհանուր վիճակն ու ուղեկցող պաթոլոգիան, ատամների կոշտ հյուսվածքների, ատամնաշարերի դեֆորմացիաների և դեֆեկտների, օրթոպեդիկ կառուցվածքով լրիվ ատամների բացակայության ախտորոշման և բուժման մեթոդներին, դիմաձնտտային հատվածքի վնասվածքների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման եղանակներին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. K. Whalen, Lippincott Illustrated Reviews, Pharmacology, Piladelphia, 2011.
2. Справочник Видаль. Лекарственные препараты в России. Астра-Фарм-Сервис. М. 2009.
3. Харкевич Д.А. Фармакология: учеб. – М.: ГЭОТАР-МЕД, 2010.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տարային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	IV	ԿԻՍԱՄՅԱԿ	VII
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	Կ.գ.թ., Դոցենտ Ալբերտ Դանիլով
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթափոխ ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննութ. ժամ	Ստուգաթղթ
IV	VII	2	17	3	60	51	20	31	3	6		
Ընդամենը		2	17	3	60	51	20	31	3	6		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
 - Հիգիենա
 - Մանրէաբանություն
 - Կենսաբանություն
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Համաճարակաբանություն» դասընթացը ուսումնասիրում է առարկայի խնդիրները, ուսմունքը համաճարակային գործընթացի մասին, վարակիչ հիվանդությունների փոխանցման գործոնները, համաճարակային գործընթացի արտահայտման ձևերը, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և պայքարի սկզբունքները, վարակիչ հիվանդությունների իմունականխարգելումը, դեզինֆեկցիոն գործը, շնչական և աղիքային վարակիչ հիվանդությունների, հեպատիտ Բ-ի և միավ վարակի համաճարակաբանությունը, ներհիվանդանոցային վարակները, ռազմական համաճարակաբանությունը:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել մարդկային հասարակության մեջ վարակիչ հիվանդությունների ծագման և տարածման պատճառները և ձեռքբերված գիտելիքները, օգտագործել այդ հիվանդությունների դեմ պայքարի, կանխարգելման և վերջին հաշվով լրիվ վերացման համար:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

Իմանա համաճարակաբանության տեսական սկզբունքները որպես համաբժշկական գիտություն, համաճարակային գործընթացի մասին, համաճարակագիտական մեթոդի բովանդակությունը և հիվանդությունների նկատմամբ սանիտարահամաճարակաբանական հսկողության հիմունքները, հակահամաճարակային և կանխարգելիչ միջոցառումների կառուցվածքի, միջոցների և բժշկական տարբեր ծառայությունների խնդիրների մասին:

Կարողանա կատարել հիվանդության և մահացության ռետրոսպեկտիվ անալիզ էթիոլոգիական գործոնը հայտնաբերելու նպատակով, ինֆեկցիոն հիվանդությունների օջախում իրագործել անհրաժեշտ առաջնային հակահամաճարակային համալիր միջոցառումներ, կազմակերպել և պահպանել հիվանդանոցներում և բժշկական այլ հիմնարկներում անհրաժեշտ հակահամաճարակային ռեժիմ, կազմակերպել ինֆեկցիաների իմունականիսարգելումը:

Տիրապետի համաճարակագիտության բնագավառում կիրառվող լաբորատոր հետազոտության հիմնական մեթոդներին, օգտագործվող սարքավորումների գործունեությանը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Ա.Բ., «Ինֆեկցիոն և վիրուսային հիվանդությունների էպիդեմիոլոգիան և պրոֆիլակտիկան», Երևան, «Հայաստան», 1975:
2. Դեղձունյան Կ.Մ., Համբարձումյան Ա.Զ., «Համաճարակաբանություն», Երևան, 1999:
3. Черкасский Б.И. Общая эпидемиология. М., 2002.
4. World Health Organization resources – <http://www.who.int/en/>.
5. National Center for Immunization and Respiratory Diseases USA. Epidemiology and Prevention of Vaccine-Preventable Diseases. 13th Edition (2015).

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	IV	ԿԻՍԱՄՅԱԿ	VII
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.թ., Դոցենտ Ալբերտ Դանիլով
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականսաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթափոխ ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննութ. ժամ	Ստուգաթիվ
IV	VII	2	17	3	60	51	20	31	3	6		
Ընդամենը		2	17	3	60	51	20	31	3	6		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
Հիգիենա, Մանրէաբանություն, Համաճարակաբանություն, Կենսաբանություն
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
«Հանրային առողջություն և առողջապահություն» դասընթացը ուսումնասիրում է բժշկական վիճակագրությունը, ազգաբնակչության առողջության հետազոտությունը, հիվանդացության և ֆիզիկական զարգացման հետազոտությունը, առողջապահության կազմակերպման հիմնական սկզբունքները, քաղաքային բնակչության բուժ-կանխարգելիչ օգնության կազմակերպումը, գյուղական բնակչության բժշկական օգնության կազմակերպումը, արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների բժշկա-սանիտարական օգնության կազմակերպումը, սանիտարա-համաճարակաբանական ծառայության կազմակերպումը, հի առողջապահության նախարարության համակարգի կառուցվածքը և համակարգի բարեփոխման ծրագիրը, սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովությունը, աշխատունակության բժշկական փորձաքննությունը, իմունականխարգելման հիմնական դրույթները, նյարդա-հոգեկան, սիրտ-անոթային հիվանդությունները, ալկոհոլիզմը, տրավմատիզմը, տուբերկուլյոզը, ձիախ-ը և չարորակ նորագոյացությունները՝ որպես սոցիալական խնդիրը, առողջապահության էկոնոմիկայի կարևորագույն հարցերը, ահկ-ն, բնակչության հիգիենիկ ուսուցումը:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ լիարժեք մասնագիտական պատկերացում բնակչության առողջության հասարակական գործոնների ազդեցության մասին, որի հիման վրա հնարավոր կլինի մշակել միջոցառումներ՝ վնասակար պայմանների ազդեցության կանխման և վերացման համար:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա հանրային առողջության կազմակերպման տեսական դրույթները, բնակչության բուժ-կանխարգելիչ օգնության և սանիտարա-համաճարակաբանական ծառայության կազմակերպման սկզբունքները, ազգաբնակչության առողջության վրա սոցիալական և արտաքին միջավայրի գործոնների անբարենպաստ ազդեցության կանխարգելման միջոցառումների կազմակերպման հիմունքները, տարբեր բժշկական, մանկական հիմնարկություններում և ձեռնարկություններում բժշկի աշխատանքի առանձնահատկությունները, տեղամասային սկզբունքի և դիսպանսեր մեթոդի էությունը:

Կարողանա մշակման ենթարկել հետազոտության տվյալները, կատարել բնակչության առողջությունը բնութագրող դեմոգրաֆիկ, հիվանդացության և ֆիզիկական զարգացման ցուցանիշների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության թերթիկների անալիզը:

Տիրապետի վիճակագրության հետազոտության կազմակերպման մեթոդին, աշխատանքի հաշվառման փաստաթղթերի, հաշվետվությունների և այլ ինֆորմացիայի մշակման տարբեր էտապներում կիրառվող էլեկտրոնային տեխնիկային:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսկոյան Ա.Բ., «ՀՀ էկոլոգիական իրավունք», Երևան, 2000.
2. Медик В.А., Юрьев В.С. “Общественное здоровье”, М., 2003
3. Миняева В.А., Вишнякова Н.И. “Общественное здоровье и здравоохранение”, М., 2006
4. World Health Organization resources – <http://www.who.int/en/>.
5. National Center for Immunization and Respiratory Diseases USA. Epidemiology and Prevention of Vaccine-Preventable Diseases. 13th Edition (2015).
6. Richard Dicker, et al. Principles of Epidemiology in Public Health Practice, Third Edition. 2006.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տարային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԻԳԻԵՆԱ, ՌԴՀ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	III	ԿԻՍԱՄՅԱԿ	VI
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	Կ.Գ.Թ., Դոցենտ Ալբերտ Դանիլով
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.Գ.Պ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթափոփ ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգաթիվ
III	VI	3.5	17	4	105	68	24	44	31	6		
Ընդամենը		3.5	17	4	105	68	24	44	31	6		

1. ՆԱԽԱՂԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝

- Կենսաբանություն
- Քիմիա
- Անատոմիա

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հիգիենա» դասընթացն ուսուցանվում է մթնոլորտային օդի, ջրի հիգիենան, ռացիոնալ սնունդը, սննդային թունավորումները, հողի հիգիենան, կլիման և մարդու առողջությունը, հիգիենայի առանձնահատկությունները ըստ տարիքային խմբերի, բուժհիմնարկների հիգիենան, մարդու էկոլոգիան, ուրբանիզացիան, կենցաղային և արտադրական թույլները ու թունավորումները, արտաքին միջավայրի գործոնները, նրանց ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա, աշխատանքային հիգիենան, առանձնահատկությունները, ռազմադաշտային հիգիենան:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՂԱՏԱԿԸ

«Հիգիենա» կրթական դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տալ հիմնական գիտելիքներ կանխարգելիչ բժշկության վերաբերյալ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲԵՐՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա բնակչության առողջության ցուցանիշները, մարդու առողջությունը ձևավորող գործոնները (էկոլոգիական, մասնագիտական, բնակլիմայական, էնդեմիկ, սոցիալական, համաճարակաբանական, փսիխոէմոցիոնալ, ժառանգական), կլիմայական և սոցիալական գործոնների անբարենպաստ ազդեցության հետ կապված հիվանդությունները, սննդի հիգիենիկ ասպեկտները, բժշկական հիմնարկների հիգիենա, աշխատողների բժշկասանիտարական օգնության հիգիենիկ խնդիրները, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, սանիտարա-լուսավորչական աշխատանքների մեթոդները:

Կարողանա պլանավորել, վերլուծել և գնահատել բնակչության առողջական վիճակը և նրա վրա ազդող արտաքին միջավայրի գործոնները, մասնակցել բնակչությանը կանխարգելիչ և սանիտարահիգիենիկ օգնության կազմակերպման գործընթացին՝ հաշվի առնելով նրա սոցիալ-մասնագիտական և տարիքային-սեռային կառուցվածքը, կատարել

կանխարգելիչ և սանիտարահիգիենիկ միջոցառումներ:

Տիրապետի ախտորոշիչ մեթոդների կոմպլեքսի արդյունքների մեկնաբանմանը, բնակչության առողջության վիճակի ընդհանուր գնահատմանը, առանձին խումբ մարդկանց և անհատական առողջության գնահատմանը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Current Trends in Human Ecology, Edited by Priscila Lopes and Alpina Begossi. Cambridge Scholars Publishing, 2009.
2. General Hygiene & Environmental Health. Edited and Published by V. M. Zaporozhan, the State Prize-Winner of Ukraine, Academician of the Academy of Medical Sciences of Ukraine, 2005.
3. World Health Organization resources - <http://www.who.int/en/>.
4. Гигиена детей и подростков / Кучма В.Р. – М., 2013.
5. Гигиена и экология человека: учебное пособие / В.М.Глиненко и др.. – М., 2010
6. Гигиена питания / Королев А.А. – М., 2008.
7. Гигиена труда: учебник для студентов мед. вузов / под ред. Н.Ф.Измерова, В.Ф.Кириллова. – М., 2010.
8. Общая и военная гигиена / под ред. Лизунова Ю.В. и Кузнецова С.М. – Спб., 2012.
9. Основы радиационной гигиены / учебно-методическое пособие, сост. А.Н.Чураков, М.К.Иванова – Ижевск, 2009.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅՐՆ /ՌԵՅՏԻՆԳՄՅՐՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տարային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀՅՈՒՄՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՍԲԲԻՈԼՈԳԻԱ, Բ/Խ ՀՅՈՒՄՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I, II	ԿԻՍԱՄՅԱԿ	II, III
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	Կ.գ.թ. Էվելինա Հակոբջանյան
ՀԵՌԱՒՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննութ. ժամ	Ստուգարք
I	II	4	17	4	120	68	14	54	34	18		
II	III	5	17	5	150	85	20	65	41	18	6	
Ընդամենը		9	34	9	270	153	34	119	75	36	6	

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝
Կենսաբանություն, Մարդու անատոմիա, Ֆիզիկա և մաթեմատիկա, Ընդհանուր և կենսաօրգանական քիմիա, Լատիներեն

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
«Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն» դասընթացն ուսուցանվում է երկու կիսամյակների ընթացքում: II կիսամյակում ընդգրկված են հետևյալ բաժինները. բջջաբանություն՝ ուսումնասիրում է բջջի կառուցվածքն ու կենսագործունեությունը, սաղմնաբանություն՝ ուսումնասիրում է բջջիջների և հյուսվածքների ձևավորումը ներարգանդային շրջանում, ընդհանուր հյուսվածաբանություն՝ ուսումնասիրում է տարբեր հյուսվածքների ֆունկցիոնալ և բջջային տարրերի կառուցվածքը: III կիսամյակում ընդգրկված է մասնավոր հյուսվածաբանության (միկրոսկոպիկ անատոմիա) բաժինը: Այն ուսումնասիրում է որևէ համակարգի և դրանում ընդգրկված օրգանների կառուցվածքը: Դասընթացում տրվում է օրգանների կառուցվածքը մակրոսկոպիկ, միկրոսկոպիկ և էլեկտրոնամիկրոսկոպիկ մակարդակներով՝ ուսումնասիրելու ընթացքում հաշվի առնելով դրանց կատարած գործառնությունները:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ
Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ գիտական պատկերացումներ ձևավորել մարդու բջջիջների, հյուսվածքների և օրգան համակարգերի զարգացման և մանրադիտային ձևաբանության մասին, որոնք հետագայում հիմք կհանդիսանան կլինիկական առարկաների ուսումնասիրման և բժշկական մտածողության զարգացման համար:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՈՒՄՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է
Իմանա օրգանիզմի բջջիջների, հյուսվածքների, օրգանների և համակարգերի կառուցվածքային, զարգացման և տեղակայման առանձնահատկությունները՝ նրանց գործառնությունների հետ փոխազդեցության պայմաններում, բջջիջների, հյուսվածքների և օրգանների կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված օրգանիզմի զարգացման և կենսագործունեության հիմնական օրինաչափությունները, հյուսվածքների

հիստոֆունկցիոնալ առանձնահատկությունները, դրանց ուսումնասիրման մեթոդները, կենդանի օրգանիզմում առկա գործընթացների ֆիզիկաքիմիական բնույթը, որոնք ընթանում են մոլեկուլային, բջջային, հյուսվածքային և օրգանային մակարդակներում:

Կարողանա աշխատել մեծացնող սարքավորումներով (մանրադիտակներ, օպտիկական և պարզ խոշորացույցներ), նկարագրել բջիջների և հյուսվածքների կառուցվածքը, տալ տարբեր վիճակների հիստոֆիզիոլոգիական գնահատականը, անսխալ որոշել օրգանների և դրանց բաղադրատարրերի միկրոկառուցվածքը, տեղադրությունը, հյուսվածաբանական նկարագրությունն ու ճիշտ անվանումները:

Տիրապետի բժշկականաբանական հասկացողությունների համակարգին, մանրադիտության հմտություններին, հյուսվածաբանական պատրաստուկների և էլեկտրոնային մանրալուսանկարչության վերլուծությանը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Michael H. Ross, Wojciech Pawlina. Histology (with correlated cell and molecular biology).** A Text and Atlas. Sixth Edition, ISBN 978-0-7817-7200-6. Two Commerce Square 2001, Market Street, Philadelphia, PA 19103, 975 pp., 2011.
2. **Sadler T. W. Langman’s medical embryology,** 12th ed. ISBN 978-1-4511-1342-6, Copyright © 2012 Lippincott Williams & Wilkins, a Wolters Kluwer business. 351 West Camden Street Two Commerce Square Baltimore, MD 21201 2001 Market Street Philadelphia, PA 19103.
3. **Gartner L. P., Hiatt J. L., Strum J. M. Cell Biology and Histology.** 6th edition, ISBN 978-1-60831-321-1. 351 West Camden Street Baltimore, MD 21201, 374 pp., 2011.
4. **Гистология. Учебник, 2-е изд. Под ред. Улумбекова Э. Г., Чельшева Ю.А.** Москва, ГЭОТАР-МЕД, ISBN 5-9231-0228-5, 672 стр., 2002.
5. **Быков В.Л. Частная гистология человека.** 2-е изд, СОТИС, Санкт-Петербург, ISBN 5-85503-116-0, 298 стр., 1999.
6. **Кузнецов С.Л., Мушкамбаров Н.Н., Горячкина В.Л. Атлас по гистологии, цитологии и эмбриологии.** Москва, МИА, ISBN 5-89481-055-8, 374 стр., 2002.
7. **Алмазов И.В., Сутулов Л.С. Атлас по гистологии и эмбриологии.** Москва, “Медицина”, 544 стр., 1978.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.թ., Դոցենտ Ինգա Բազուկյան
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականսաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթափոխ ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգաթիվ
I	I	4	17	4	120	68	22	46	34	18		
	II	4	17	4	120	68	18	50	34	12	6	
ԸՆդամենը		8	34	8	240	136	40	96	68	30	6	

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
Կենսաբանություն, Քիմիա, Անատոմիա
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
«Կենսաբանություն» դասընթացն ուսումնասիրվում է երկու կիսամյակների ընթացքում: I կիսամյակում քննարկվում են ընդհանուր կենսաբանության հիմնահարցերը՝ ներկայացվում է առարկայի նպատակն ու խնդիրները, բացատրվում են կենդանի նյութի կազմակերպման մակարդակները, կենդանի համակարգերի հատկությունները: Մանրամասն նկարագրվում է բջջի կենսաբանությունը, կենդանի օրգանիզմների բազմացումը, ժառանգականության կանոնները, փոփոխականություն ուղիները և մեխանիզմները: II կիսամյակում ուսանողը ծանոթանում է օրգանիզմների առանձնակալային զարգացմանը, կիմանա օնթոգենեզի օրինակափոխություններն ու մեխանիզմները, ժամանակակից էվոլյուցիոն տեսությունները, պոպուլյացիայի դերը, էվոլյուցիայի գործոնները: Կքննարկվի անտրոպոգենեզի փուլերը, զարգացման վրա էկոլոգիայի ազդեցությունը: Կամփոփվեն մակարուծության հիմնական խնդիրները:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**
«Կենսաբանություն» կրթական դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տալ հիմնական գիտելիքներ բջջի կենսաբանության, գենետիկայի, զարգացման կենսաբանության, միկրո- և մակրո- էվոլյուցիայի, անտրոպոգենեզի, ընդհանուր կենսաբանության, մակարուծաբանության և մարդու էկոլոգիայի մասին:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**
Իմանա կենսաբանական համակարգերի կառուցվածքը մոլեկուլային մակարդակներով, բջջային կառուցվածքը, կենսաբանական տեղեկատվության օգտագործման, փոխանցման, պահպանման մեխանիզմների, էուկարիոտ և պրոկարիոտ օրգանիզմների գենոմի յուրահատկությունները, օրգանիզմների բազմացման տարբեր ձևերը, օրգանիզմների անհատական զարգացման մոլեկուլային մեխանիզմները, մարդու ժառանգական հիվանդությունների բուժման նոր մոտեցումները, գենային և բջջային թերապիա,

մակաբույծության հիմքերը:

Կարողանա օգտվել ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից, օտվել լաբորատոր սարքավորումներից, աշխատել մանրադիտակի հետ, իրականացնել կենսաբանական փորձ, վերլուծել և վերարտադրել ԴՆԹ-ի կրկնապատկման և սպիտակուցի կենսասինթեզի գործընթացների մոլեկուլային մոդելները:

Տիրապետի ուսումնասիրվող օբյեկտների և գործընթացների արտահայտման հմտություններին գծապատկերների տեսքով, էլեկտրոնային գծապատկերների վերլուծության հմտություններին, երեխաների քրոմոսոմային ախտաբանությամբ ծննդյան պատճառները և մեխանիզմները պատկերող նկարներ և գծապատկերներ կազմելու հմտություններին, հիվանդի արտաթորանքներում հելմինթների ձվերի հայտնաբերման մեթոդներին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. B. Glick, J. Pasternak, Molecular Biotechnology, Washington, 2002
2. General Biology, Wikibooks.org, 2013
3. O. Brandenberg, Z. Dhlamini, A. Sensi, K. Ghosh, A. Sonnino, Introduction to Molecular Biology and Genetic Engineering, Rome, 2011
4. W. Thieman, M. Palladino, Introduction to Biotechnology, Second Edition, New Jersey, 2009
5. В. Захаров, С. Мамонтов, Н. Сонин И. Общая биология, Москва, 2003
6. В. Сыч, Общая биология. Учебник для студентов высших учебных заведений. В 2-х томах, Ульяновск, 2005
7. Г. Муртазин, Задачи и упражнения для самостоятельной работы по общей биологии, Москва, 2004
8. Т. Егорова, С. Клунова, Е. Живухина. Основы биотехнологии. Москва, 2003

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	%
	ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ	20%
	ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ I ԵՎ II ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԹԵՍ)	40%
	ԱՍՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ	40%

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տարային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, Բ/Խ ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	II	ԿԻՍԱՄՅԱԿ	III, IV
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2015-2016		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.դ., Դոցենտ Նովլետ Հարությունյան
ՀԵՌԱԽՈՍ	-

ԱՄԲԻՈՆ	Բժշկականաբանական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.դ., Դոցենտ Սուսաննա Սարգսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Կոնսուլ. ժամ	Քննույթ. ժամ	Ստուգարք
II	III	4	17	4	120	68	20	48	34	18		
	IV	4	17	4	120	68	20	48	34	12	6	
Ընդամենը		8	34	8	240	136	40	36	68	30	6	

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝

Կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, կենսաքիմիա, մարդու անատոմիա, կենսաէթիկա, բժշկության պատմություն, հոգեբանություն, լատիներեն:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բժշկական մանրէաբանության առարկան, խնդիրները և զարգացման էտապները, մանրէների հիմնական խմբերը, բակտերիաների կառուցվածքային և նյութափոխանակային առանձնահատկությունները, դասակարգումը, ինֆեկցիաներ, էպիդեմիոլոգիան, իմունիտետի, իմունոթերապիայի, իմունոպրոֆիլակտիկայի և իմունոդիագնոստիկայի հիմնահարցերը, ընդհանուր վիրուսոլոգիան, մարդու նորմալ միկրոբիոտան, մանրէների հայտնաբերման մեթոդները, գրամ դրական և բացասական բակտերիաների կողմից հարուցվող հիվանդությունները, վիրուսային ծագմամբ հիվանդությունները, միկոզները, նախակենդանիների կողմից հարուցվող հիվանդությունները, բերանի խոռոչի միկրոբիոտան, մանրէների աթեղիան խոռոչային մակերեսներին, ատամների կարիեսի, պոլիպիտի, պերիոդոնտիտի և պարոդոնտիտի հարուցիչները:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուսանողների մոտ ձևավորել մանրէների տարածվածության, դասակարգման և հատկությունների, ինչպես նաև մարդու նորմալ միկրոբիոտային, իմունիտետի, ախտածին մանրէների կողմից հարուցվող հիվանդությունների էպիդեմիոլոգիայի, կանխարգելման և բուժման վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացումներ:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՆՈՒՄՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա ընդհանուր մանրէաբանության մասին պատկերացում, մանրէաբանական լաբորատորիաներում աշխատանքի և անվտանգության տեխնիկայի կանոնները, մարդու օրգանիզմի և մանրէների միջև սիմբիոտիկ գործընթացների ձևավորման, օրգանիզմի միկրոբիոտայի դերը օպորտունիստական հիվանդությունների զարգացման ընթացքում, մարդու նորմալ միկրոբիոտայի, մանրէների հակաբիոտիկակայությունության ձեռքբերման մեխանիզմները և դրանց որոշումը, մարդու հիմնական ինֆեկցիոն հիվանդությունների էտիոլոգիայում և ախտածնության մեջ մանրէային աշխարհի առանձին ներկայացուցիչների

դերը, մանրէաբանական ախտորոշման մեթոդները:

Կարողանա կիրառել մանրէաբանական մեթոդները, հիմնավորել ինֆեկցիոն և օպորտունիստական հիվանդությունների դեպքում մանրէաբանական, սերոլոգիական և իմունոլոգիական ախտորոշման ընտրությունը, հիմնավորել ինֆեկցիոն և օպորտունիստական հիվանդության ախտորոշման ընտրությունը, կիրառել ստացած գիտելիքները որոշելու համար հակամանրէային և իմունոտրոպ թերապիայի տակտիկան, կիրառել անհետաձգելի կանխարգելում և հակատոքսիկ թերապիա:

Տիրապետի մանրէագրծման, դեզինֆեկցիայի մեթոդներին, հիվանդների լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա նախնական ախտորոշման հմտություններին, ախտածին և պայմանական-ախտածին մանրէների հետ աշխատանքի հիմնական հմտություններին, ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և բուժման համար հակամանրէական և իմունակենսաբանական պատրաստուկների ընտրման մեթոդիկային:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շեկոյան Վ., Մանուկյան Կ. Բժշկական մանրէաբանություն, վիրուսաբանություն և իմունաբանություն: Երևան, ԵՊԲՀ հրատարակչություն, 2009, 478 էջ:
2. Поздеев О.К. Медицинская микробиология, Москва, Геотар-Мед, 2001, 765 с.
